ԿԱԴՐԵՐԻ ԵՎ ԱՀՏԱ ԲԱԺՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐԸ

1. Իրականացնում է կրթահամալիրի կադրային ու անձնակազմի հետ տարվող աշխատանքները,
2. պարբերաբար ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պետին է ներկայացնում կադրերի տեղաբաշխման վերաբերյալ առաջարկություններ,
3. իրականացնում է տվյալ տարվա ընթացքում ոստիկանության կրթահամալիրի ծառայողների հերթական կոչումների շնորհման և ոստիկանությունում երկարամյա ծառայության համար մեդալներով ենթակա ոստիկանության ծառայողների պարգևատրման գործընթացը,
5. որոշում է անձնակազմի հետ տարվող աշխատանքների հիմնական ուղղությունները, դրանց իրականացման ժամանակները, տալիս հեռանկարային և ընթացիկ պլաններ անձնակազմի հետ տարվող աշխատանքների վերաբերյալ, վերահսկում դրանց կատարման գործընթացը,
6. իրականացնում կրթահամալիրի ծառայողների, տեխնիկական ապասարկում իրականացնող, քաղաքացիական աշխատանք կատարող անձանց և սովորողների անձնական գործերի պահպանման և վարման աշխատանքները,
7. իրականացնում է անձնակազմի շրջանում օրինականության և կարգապահության ամրապնդման ուղղությամբ աշխատանքներ և միջոցներ ձեռնարկում կարգապահական զանցանքների և օրինականության խախտման դեպքերի թաքցման փաստերը կանխելու համար,
8. իրականացնում է ծառայողական քննություն կրթահամալիրի պետի հանձնարարությամբ՝ ծառայողների կողմից թույլ տրված կարգապահական խախտումների առանձին դեպքերով,
9. իրականացնում է ծառայողական-կատարողական կարգապահության և էթիկայի կանոնների ամրապնդման ուղղությամբ աշխատանքներ՝ ծառայողների բարոյահոգեբանական, հայրենասիրական դաստիարակության երդման հավատարմության հիման վրա պետահրավական մտածելակերպի և օրինավոր քաղաքացու ձևավորման նպատակով,
10. ծառայողների հետ անհատական զրույցների միջոցով պարզվում է նրանց գործնական, անձնական, բարոյական հատկանիշները և սոցիալական վիճակը,
13 անձնակազմի հետ տարվող աշխատանքներին վերաբերող հարցերով անցկացնում է խորհրդակցություններ, քննարկումներ՝ բողոքները, ծառայողական քննության արդյունքները, պարզաբանելու համար,
14. վերլուծում և ամփոփում է անձնակազմի հետ տարվող աշխատանքների արդյունքները և միջոցներ ձեռնարկում դրանք բարելավելու ուղղությամբ,
15. նպաստում է ոստիկանության ծառայողների հեղինակության բարձրացման ուղղությամբ հասարակական կարծիքի ձևավորմանը,
16. իրականացնում է ոստիկանության ծառայողների, քաղաքացիական աշխատանք կատարող, տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց հաշվառման աշխատանքները և նրանց անձնական գործերում, ծառայողական քարտերում համապատասխան գրառումների կատարման աշխատանքները,
17. իրականացնում է կադրերի ընտրության և թեկնածուների կենսագրական և փաստաթղթային ուսումնասիրման գործընթացը,
18. իրականացնում է ոստիկանության ծառայողների ծառայողական, մարտական և ֆիզիկական պատրաստականության աշխատանքները,

19. իրականացնում է ոստիկանության կրթահամալիրի գլխավոր, ավագ, միջին և կրտսեր խմբերի պաշտոններ զբաղեցնող ծառայողների վերապատրաստման աշխատանքները,

20. իրականացնում է ծառայության բնույթը փոխած կրտսեր և միջին խմբերի պաշտոններ զբաղեցնող ծառայողների ստաժավորման աշխատանքները,

21. իրականացնում է ոստիկանությունում առաջին անգամ պաշտոնի նշանակված անձանց նկատմամբ մասնագիտացման ղեկավարման աշխատանքները,

22. իրականացնում է պաշտոնի նշանակման, ազատման, փոխադրման, ոստիկանությունում ծառայությունից ազատման նյութերի նախապատրաստման աշխատանքները,

23.իրականացնում է ոստիկանության ծառայողներին և տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց խրախուսելու կամ կարգապահական տույժի ենթարկելու վերաբերյալ նյութերի նախապատրաստման աշխատանքներ,

24. իրականացնում է ոստիկանության կրթահամալիրի ծառայողների կոչումների շնորհման և ոստիկանությունում երկարամյա ծառայության համար մեդալներով պարգևատրման նյութերի նախապատրաստման աշխատանքները,

25. իրականացնում է տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց աշխատանքի ընդունման, պաշտոնի նշանակման /աշխատանքային պայմանագրերի կնքման/, փոխադրման, աշխատանքից ազատման /աշխատանքային պայմանագրի լուծման/ նյութերի նախապատրաստման աշխատանքները,

26. իրականացնում է ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ծառայողներին և սովորողներին զինված ուժերի զինվորական հաշվառման վերցնելու, ծառայությունից ազատման դեպքում ՀՀ ոստիկանության հաշվառումից հանելու և զինված ուժերում զինվորական հաշվառման վերցնելու գործընթացները,

27. իրականացնում է ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ծառայողներին և սովորողներին ծառայողական վկայականների տրամադրման, փոփոխման և արձակուրդների ձևակերպման գործընթացները,

28. իրականացնում է ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի մագիստրատուրայի (հեռակա վճարովի ուսուցման) իրավագիտության ֆակուլտետի (առկա անվճար, առկա վճարովի ուսուցման), քոլեջի դիմորդների ընդունելության փաստաթղթերի ընդունումը, նրանց վերաբերյալ նախապատրաստում ուսումնասիրության նյութեր, ինչպես նաև ստուգում ՀՀ ոստիկանության կառուցվածքային և տարածքային ստորաբաժանումներից ստացված թեկնածուների համար նախապատրաստված ուսումնասիրության նյութերը մանդատային հանձնաժողովի քննարկմանը ներկայացնելու համար: